ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«22» հոկտեմբերի 2025թ. N 186-Ա

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ (ԳԻՏԱԺՈՂՈՎ) ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1-ին հոդվածի 3-րդ մասի 31-րդ կետով, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի օգոստոսի 23-ի N 06-Ն հրամանի 1-ին հավելվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի «ե» ենթակետը և 15-րդ կետը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի կողմից 2025 թվականի հոկտեմբերի 14-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտե ներկայացված՝ քաղաքաշինության բնագավառում նախատեսվող շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող «Քաղաքացիական և շրջակա միջավայրի ճարտարագիտություն (ICCEE 2025)» միջոցառման (գիտաժողով) ծրագիրը և ծրագրին շնորհել առաջին սեկցիա՝ 2 կրեդիտ, երկրորդ սեկցիա՝ 3 կրեդիտ և երրորդ սեկցիա՝ 2 կրեդիտ:

2. Հաստատել «Քաղաքացիական և շրջակա միջավայրի ճարտարագիտություն (ICCEE 2025)» միջոցառման իրականացման ժամանակացույցը՝ համաձայն Հավելվածի:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 1-ին կետով նախատեսված միջոցառման կազմակերպչին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

10/22/2025

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի

2025 թվականի հոկտեմբերի 02 -ի N 186 -Ա հրամանի

«Քաղաքացիական և շրջակա միջավայրի ճարտարագիտություն (ICCEE 2025)» միջոցառման (գիտաժողով) ժամանակացույց

Հ/Հ	Ամսաթիվ	Ժամ	Թեմայի անվանում	Միջոցառման պատասխանատու	Դասընթացների անցկացման ձևաչափը և վայրը	Միջոցառման կրեդիտները	Հավաստագրման ենթակա համապատասխան մասնագիտությունը	Մասնակցության վճարի չափը
1	2	3	4	5	6	7	8	9
1	Հոկտեմբերի 24 (սեկցիա 1)	14"30-17"30	«Քաղաքացիական և շրջակա միջավայրի ճարտարագիտություն (ICCEE 2025)»	Թովմասյան Սարգիս Արիստակեսի, Գիտության վարչության ղեկավար, Գիտական աշխատանքների գծով պրոռեկտորի պ/կ	Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, Ք.Երևան, Տերյան 105	2 կրեդիտ	1-ին կարգի մասնագետ, 2-րդ կարգի մասնագետ 01-06, 11-26, 34 մասնագիտություններ	Անվճար է

2	Հոկտեմբերի 24 (սեկցիա 2)	14"30-17"00	«Քաղաքացիական և շրջակա միջավայրի ճարտարագիտություն (ICCEE 2025)»	Թովմասյան Սարգիս Արիստակեսի, Գիտության վարչության ղեկավար, Գիտական աշխատանքների գծով պրոռեկտորի պ/կ	Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, Ք.Երևան, Տերյան 105	2 կրեդիտ	1-ին կարգի մասնագետ, 2-րդ կարգի մասնագետ 15-22 մասնագիտություններ	Անվճար է
3	Հոկտեմբերի 25 (սեկցիա 3)	10"00-13"30	«Քաղաքացիական և շրջակա միջավայրի ճարտարագիտություն (ICCEE 2025)»	Թովմասյան Սարգիս Արիստակեսի, Գիտության վարչության ղեկավար, Գիտական աշխատանքների գծով պրոռեկտորի պ/կ	Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, Ք.Երևան, Տերյան 105	3 կրեդիտ	1-ին կարգի մասնագետ, 2-րդ կարգի մասնագետ 01-06, 15-18, 23-26, 34 մասնագիտություններ	Անվճար է